սիօնիզմի ամենագլխաւոր հակառակորդի մասին։ Դա հրէական լաւագոյն երիտասարդութեան մի մասն է, որը շատ լաւ հասկանում է նոր շարժման էութիւնը, բայց նա չի համակրում մանաւանդ գործունէութեան տակտիկան։ Նա դատապարտում է սիօնիստներին, որ միայն մեծ մեծ ծրագիրներ են կազմում առանց անմիջական օգնութեան հասցնելու թշուառ հրէաներին, որ ամբողջ յոյսը դրել են ապագայի վրայ և ոգևորւում են կարմիր գազանի—սուլթան Համիդի հետ բանակցութիւններ վարելով, բանակցութիւններ, որոնք, երևի, վերջ ի վերջոյ ոչ մի դրական հետևանք ունենալու չեն։

Ահա այդ հրէայ երիտասարդներից շատերն էին, որ միացան հայ, ռուս, բուլղար վրացի ուսանողների հետ և բողոքեցին սիօնիստների վերջին համագումարի ժամանակ՝ Համիդին շնորհաւորական հեռագիր ուղարկելու առթիւ։

Ե. Թ.

---

20) ԲԺԿ. Վ. ԱՐԾՐՈՒՆԻ, «Թոքախտ *կամ* **Բարակացաւ»,** *պատկերազարդ, Թիֆլիս,* 1902 *թ., գինն է* 10 *կ.։*

—

Յարգելի հեղինակը մեծ եռանդով շարունակում է հրատարակել իր «Բժշկի Զրոյցները»։ Նրա գրելու ձևի մասին արդէն քանիցս առիթ ենք ունեցել խօսելու։ Այս չորրորդ «զրոյցը» վերաբերում է այն սարսափելի ցաւին, որից գլխաւորապէս զոհւում են մարդիկ իրանց ծաղիկ հասակում։

«Եթէ հաշուելու լինենք 20-ից մինչև 40 տարեկան հասակում մեռնողների թիւը, ասում է հեղինակը, կը տեսնենք, որ երեք մեռնողներից մէկը բարակացաւից է»։

Ահա այդ գրքի բովանդակութիւնը.

Թոքախտաւորը.—Թոքախտը վարակիչ հիւանդութիւն է.—Թոքախտի թոյնը.—Զգո՜յշ եղէք թոքախտաւորի թքից, որովհետև նրա մէջն է թոյնը.—Ո՞վքեր են հիւանդանում թոքախտով.—Ի՞նչպէս պէտք է պահպանուել վարակումից.—Ի՞նչպէս պէտք է պահել թոքախտաւոր ծնողների զաւակներին.—Ի՞նչպէս պէտք է խնամել հիւանդին.—Թոքախտը բուժելի հիւանդութիւն է.—Թոքախտաւորները կարող են ամուսնանալ, թէ ոչ։

Այս համառօտ վերնագիրներից պարզ է, որ հարցը ամեն կողմից լուսաբանուած է և ընթերցողը կարող է ոչ միայն

լիակատար գաղափար կազմել այդ զարհուրելի ցաւի մասին, այլ և իրան պահպանել վարակումներից։ Ցանկալի է որ այս գրքոյկը տարածուի և դպրոցներում։

Լ. Ս.

ՆՈՐ ՍՏԱՑՈՒԱԾ ԳՐՔԵՐ

1) Ա. Ա. Պոյիթոյ, Ներոն, ողբերգութիւն 5 արար., թարգմ. Հ. Ա. Ղազարեան, Վենետիկ, 1902, գինն է 75 սանտիմ։
2) Բժ. Ա. Բուդուղեան. Ի՞նչ է կաշուի հիւանդութիւնը, Պետերբուրգ, 1902, գինն է 15 կոպ.։
3) » » » Վերաբուժական հիւանդութիւն և օպերացիա, Պետերբուրգ, 1902, գինն է 5 կոպ.։
4) Գր. Բազ.-Աղաջանեան, բանաստեղծութիւններ, Բագու, 1902, գինն է 10 կոպ.։
5) Լէօ, Յովսէփ Կաթողիկոս Արղութեան, չորս պատկերով, Թիֆլիս, 1902, գինն է 60 կոպ.։
6) Ա. քահանայ Բագրատունի, Հոգեւոր ընթրիք, Վաղարշապատ, 1901, գինն է 40 կոպ.։
7) Ե. Թ. Հաուպտման, (պատկերով) հրատ. Ց. Ադամեանի, Պետերբուրգ, 1902, գինն է 15 կոպ.։
8) Սուքիաս Պարոնեան. Քաղկեդոնեան ժողով և Հայաստանեայց եկեղեցի, Պարիս, 1902 թ. գինն է 2,50 ֆր.։
9) Н. Адонцъ, „Начальная исторія Арменіи“ у Себеоса въ ея отношеніяхъ къ трудамъ Моисея Хоренскаго и Фауста Византійскаго (оттискъ изъ VIII тома, № 1 и 2 „Византійскаго Временника“, 1901 г.)
10) А. К. Дживелеговъ, Средневѣковые города въ западной Европѣ, С.-Петербургъ, 1902, цѣна 1 руб.